# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 75-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«______» ___________-ի 2019 թվականի N_______-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ** 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 75-Ն **ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ** ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ **ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*`

1. Հայաստանի Հանրապետության կառավարության2006 թվականի հունվարի 26-ի «Օ**տարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ պետական պատվերի շրջանակներում ուսման գործուղված փրկարարական ծառայողներինդրամական վճարների չափը և վճարման կարգը սահմանելու մասին**» N 75-Ն որոշման (այսուհետ` որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները`

1) որոշման վերնագրում և 1-ին կետում, հավելվածի վերնագրում, 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում «ուսման» բառից հետո լրացնել «և վերապատրաստման» բառը.

2) որոշման նախաբանում «օրենքի» բառից հետո լրացնել «34-րդ հոդվածի 4-րդ մասին և» բառերը.

3) որոշման հավելվածի 2-րդ կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| NN ը/կ | Պաշտոնների խումբը | Դրամական վճ (ՀՀ դրամ) Ռուսաստանի Դաշնության ուսումնական հաստատությո ունկնդիրների |
|---|---|---|
| 1. | Փրկարարական ծառայության բարձրագույն պաշտոններ | 150 000 |
| 2. | Փրկարարական ծառայության գլխավոր պաշտոններ | 135 000 |
| 3. | Փրկարարական ծառայության ավագ պաշտոններ | 117 000 |
| 4. | Փրկարարական ծառայության միջին պաշտոններ | 108 000 |
| 5. | Փրկարարական ծառայության կրտսեր պաշտոններ | 99 000 |

».

4) որոշման հավելվածի 3-րդ կետում «18.000» թիվը փոխարինել «99 000» թվով.

5) որոշման հավելվածի 5-րդ կետում՝

ա. «սովորող» բառից հետո լրացնել «վերապատրաստվող» բառը,

բ. հանել «աշխատակազմի» բառը:

2. 2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում անհրաժեշտ վերաբաշխումների վերաբերյալ՝ ելնելով Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով Փրկարար ծառայության համար նախատեսված հատկացումների վերահաշվարկից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ Նիկոլ Փաշինյան

2019 թվական _________ ___

ք. Երևան